

## ԱՎԵՏՅԱՅ ԵՐԿՐԻ ՏԵՍԼԱԿԱԾՈՅ

«Ո՞վ կրա ինձ շամանդաղը պապենական առավորի...»: Արմագրներով վանեցի, բանասփեղծ Լևոն Միրիջանյանի մրմունջն էր սա՝ Էրգրի ճանապարհին: Այս կանչը, այս երազը, նախնիների հանդեպ խոնարհումը միշտ ուղեկից է բոլոր նրանց, ովքեր ճամփա են ելնում դեպի պապենական հողերը:

Միրիջանյանն ի՞նչ էր փնտրում իր պապերի երկրում՝ փորձելով շոշափելի դարձնել իր կարուղների գեղականը, որ ամեն առավորի լուսի հետ ազքերի առաջ էր՝ Վանա լճի, Աղթամարի, Անիի կիսավեր եկեղեցիների, արմագրի և ճյուղի մի մամուկալած արահետի գեսքով:



Վաղուց, շար վաղուց Լևոն Միրիջանյանի ազքերի առջև վառ ու կենդանի գեղացել էր պապենական հայրենիքի պարկերը: Եվ բնական է, որ իրական հանդիպման առաջին արձագանքը պիտի լիներ՝ «Լոյս իշավ մեր ազքերին. մի սուրբ գեսիլը գեսաւ ես՝ սրբիս մեջ հույս ու մրմուռ»:

Նախնիների հանդեպ խորին խոնարհումով նա փոքրիկ իր կինոխցիկով նկարահանեց ամեն գեսածը, որպեսզի իր կարուղի զուգահեռումը պահպանի Վանա լճի, «Աղթամարի», Անիի կիսավեր եկեղեցիների հետ... Ինքը կաղրերում համարյա չկար՝ ինքը նկարողն էր, ասես հենց գեղում ֆիլմ էր սփեղծում՝ վախենալով, թե այդ գեսիլը կանհետքանա մի օր: Ներայիտու նա «իր այդ գանձերի գոյությունը» շարունակ զգում էր իր դրան մեջ. «...Ամեն Ասգծու օր սենյակս լի է Անիով: Պարերը հետ-հետ են գնում, կապույտ հերանը դառնում է անշրջանակ, լցվում արևով... Իմ երևակայությանը միլիոն-միլիոն քարաբեկորներ հետ են թռչում իրենց գեղերը, ճանապարհները դառնում են սալահապակ, պարիսամերը վեր են բարձրանում ու երկարում: Վեհանում են մով ու հեռու գմբեթները: Ահավոր լուսաթյունը մեկն լցվում է կյանքի ձայներով. շարունակվում է Անիի մեծաժխոր առօրյան...»:

Սա Միրիջանյանի Անին է, գեղականը՝ իրական:

Երբ գարիներ անց ես նայում էի սիրողական կինոխցիկով նկարահանած նրա կաղրերը, իմ ուշադրությունը գրավեցին նկարահանումների պահերին նրա բարձրածայնած մենախոսությունները: Նա մենակ էր իր կինոխցիկի հետ, և ձայնագրվել էր նաև նրա հևոցն էլ, նրա՝ ինքն իր ու գեղարանների «հետ ունեցած» գրույցն էլ, նրա... լացն էլ: Նա միշտ չէ, որ կարողանում էր հուզմունքը զապել, և ինքնին եկել էր նաև հեկելոցը:

Եվ հեկեկոցի հետ, հենց գեղում ծնված բանապեղական խոսքն էր լսվում: Իր նախնիների գրորված, ջնջված ովնահետքերը որոնողի ու զգբնողի ցավագին երկն էր դա.

«Ի՞նչ անազորույն ճակապագիր,  
Ի՞նչ ամենակուլ վայրագություն.  
Ահա՝ ոչ շիրիմ, ոչ քար, ոչ գիր,  
Եվ, սակայն, վսե՞մ մի պարմություն...»:

Այդ բարի, այդ հրաշալի անհապը ուխտավորների խմբին, այսպես ասած, Էրգրի բացապրություններ գրվողն էր՝ Վարազդափ Նարությունյանի հետ: «Աշխափանքի» հետքաքրքիր բաժանում էին արել. Վարազդափ Նարությունյանը՝ նոյն վանեցու արմագրներով,

ճարդարապետական հուշարձաններ ներկայացնողն էր ու Վանից իրեն հասած երգերի կափարողը, Լևոն Միրիջանյանը՝ պարմական իրողությունների մեկնողը: Վերջինիս զգացական, հյութեղ պարմությունները, բացաբրությունները գրական ու պարմագիտական բոլոր ժանրերի ընդրանի էին՝ մարզելի, ընկալելի, պարզ, սակայն խորը իմացություն պարունակող պարումներով, գեղեցիկ ձևակերպումներով ու քնարական գեղումներով:

Օրինակ, Աղթամարի եկեղեցու շուրջ մի քանի պարույք կափարեց ու երգեց «Տեր, ողորմեան», և խումբն ակամայից նրան հեփսեց՝ հասկանալով, որ այդ պարույքը պետք է՝ զգացական ապրումների մի պահ ունենալու, երևակայորեն ժամանակը հետ գրանելու և ինքն իրեն զգալու այն օրերի մեջ, երբ այսպեղ՝ գործող եկեղեցում, պաշտոնագրար հոգևորականի շուրջերով հնչել է այդ նույն «Տեր, ողորմեան»:

Լևոն Միրիջանյանի հայրը՝ Վարդան Միրիջանյանը, 1894 թվականին ծնվել է Վան քաղաքում՝ Այգեստանում: Դրանից մոտ հարյուր տարի անց՝ 1991-ին, որին այցելում է Վան: Ինչ պիտի որոներ Լևոն Միրիջանյանն այնքեղ առաջին հերթին՝ իր հայրական գրունը Այգեստանի Կոր Դար թաղի Նախրի փողոցում: Փողոցն այդպես է կոչվել, որովհետո նրանով են անցել արուրավայր տարվող բոլոր թաղերի կովերը: Նա գնում էր որոնելու՝ ուխտավոր ընկերներին բարձրածայնելով իր ներքին մքորումները. «Ամբողջ կյանքում մեզանից ամեն մեկը սնվել է Վանի իր պարկերացումով: Մայրական կաթի հետ Վանը մրել է մեր էռլեյան մեջ, սնուցել մեր բոլոր բջիջները, դարձել մեր մեծագույն կարողն ու հպարփությունը, երազանքների երազանքը, իղձերի իղձը: Եվ իհմա լուռ, անխոս նայում ենք իրար, ու բոլորին ուղեղը մրճահարում է միևնույն հարցը՝ նմա՞ն է մեր գեսածը մեր երևակայածին... Եվ այս, և ոչ...»:

Նախրի փողոցում ուղեկցողը Միրիջանյանին ցույց է տալիս մերայի նեղ դարպասով միահարկ գրունը՝ «Սա հայի գրուն է եղել»: Նայերով խիստ բնակեցված այդ փողոցում միակ պահպանված գրունը: Փառք Ասպծո, որ գոնե այդ գրունը պահպանվել էր: Մովեցավ գրանը, շոշափեց պարերը. «... Մեր իին ծառի ճյուղն ես փրկված»: Ասաց ու, ովնահետքեր կորցրածի անորոշ հայացքով, հեռացավ այլևս միայն ցավ պարճառող այդ թաղից:

«Նեպո՞ դեմի Վանա ծովակ ու Աղթամար, ուր զգացումն ու գավառությունները պիտի գրամադրեին՝ սպեղծել «Ծովի կարուդը» բանասքեղծական շարքը: «Երանի նրան, ով ամեն օր է գրեսնում Վանա լիճը»: Անգամ երանի էր տալիս գրաճարում բներ հյուսած աղավնիներին, որ Ասպծու գրված ամեն օր Վանա լճում են ու Աղթամարի վրա: Նրանք՝ այդ աղավնիները, հոգիներն են նահապակաց, որ «զօր ու գիշեր պահակում են հողն ու ծովը հայրենի»: «...Ո՞վ երջանիկ բնիկներ, /Այս աշխարհում ի՞նչ կա վսեմ, քան բաղձակի բախսը ձեր..., /Դուք հավեր չեք սովորական, այլ՝ խորհուրդներ թևակող, /Հոգիներն եք մեր սրբանուն նահապակաց բյուրանուն»:

Ու հեփու հարցականը թառեց շուրջերին՝

«Ո՞վ կպա ինձ շամանդաղն այն առավոտի,  
Երբ որ Վանն էր քնաթաթախ ելնում ուրի,  
Երբ թաղով մեկ վարդն էր բացվում՝ ցողը վրան,  
Երբ կոչնակը՝ կոչնակելով, մորենում էր ամեն դռան,  
Երբ որ բարով բացվում էին դռները փակ,  
Երբ հարսները ավլում էին փողոց ու բակ...  
Երբ հեզանազ ելնում էին մամիկները

խաթուն-խաթուն,  
Շորոր գրալով մքնում ամբար ու թոնրագրուն...  
...Ո՞վ կպա ինձ շամանդաղը

պապենական առավոտի...

Այսպես՝ ուսած իր անցյալը, հուշերում անթեղած պապենական դան ու բակի, արդ ու սարի ովնահետքերի պարկերները, այլևս ինչ-որ չափով խաղաղված, որ ուխտը կարարել է, դեմքը դարձրեց զալիքին ու շարունակեց հայ դպրության մշակի իր գործը, մինչև որ այն երկնային հեռուներում գնաց-միացավ նրանց, ում կարովից էր ուխտի գնացել իր ծնողների, իր պապերի երկիր:

*Շարունակելի*